

Եւ վերջապէս Հայ առաջին գուսաներգուները, որոնք ծանօթ են Գողթան երգիչներ անունով, եւ որոնք կ'երթային երգել տօներու, հարսնիքներու, խրախճանքներու առթիւ, իրենց երգերուն նիւթ ըրած էին Արտաշէսի փառաւոր կեանքը: Դժբախտաբար հատակոտորներ միայն հասած են մեզի այդ երգերէն, որոնք, մեր կարծիքով, մասերն էին թատերական ամբողջութեան մը, ինչպէս պիտի բացատրենք յետոյ: Եթէ անոնց մէկ մասը յօրինուած էր Արտաշէսի մահէն ետք, մէկ մասը պէտք է արդէն գոյութիւն ունեցած ըլլար Արտաշէսի օրով, եւ երգուէր ու խաղցուէր վեհապետին իսկ առջեւ, ինչպէս սովորութիւն էր հին ատեն, երբ արքաները կը փառարանուէին իրենց իսկ ներկայութեանը:

ՏԻԳՐԱՆ Բ.Ի ՕՐՈՎ (95-55, ՔՐԻՍՏՈՍԷ ԱՌԱՋ)

Արտաշէսի մահէն յետոյ 65 տարուան շրջան մը (160-95) մութի մէջ է քննական պատմութեան համար: Աւանդաբար միայն գիտենք, թէ այդ շրջանին Արտաշէսի դահուն վրայ բազմած են երկու վեհապետներ՝ Արտաւազդ Ա. եւ Տիգրան Ա.:

95ին է, որ ասպարէզ կողգայ Հայոց պատմութեան մէջ գրեթէ իր նմանը չունեցող վեհապետ մը, Տիգրան Բ., որ ծանօթ է Մեծն Տիգրան անունով: Տիգրան Մեծի անձնաւորութիւնն ու գործերը շատ մանրամասն կերպով լուսարանուած են յոյն եւ հռոմայեցի պատմիչներու կողմէ:

Տիգրան դաշնակցեցաւ Պոնտոսի հետ, վերականգնեց հայկական բանակը, նուաճեց ու ձուլեց հայկական մեծ ու փոքր իշխանութիւնները, ետ խլեց Պարսկաստանէն՝ 70 հովիտները եւ «Արքայից Արքայ» տիտղոսը, նուաճեց Սելեւկեան ամբողջ պետութիւնը, իր տիրապետութեան սահմանները տարածելով Կուր գետի ափերէն մինչեւ Յորդանան, Մարաստանի լեռներէն մինչեւ Կիլիկեան Տաւրոսի ստորոտները: Տիգրան նշանաւոր հանդիսացաւ նաեւ Հռոմի դէմ իր մղած պատերազմներով, զորս ունեցաւ մասնաւորապէս Լուկուլլոսի եւ Պոմպէոսի հետ:

Բայց մեծ եղաւ մանաւանդ Մեծն Տիգրանի շինարար գերը: Ան ոչ միայն բուն Հայաստանը, այլ նաեւ ուղեց քաղաքակրթել Միջագետքն ու Մարաստանը, զանոնք լեցնելով հելլէն գաղթականներով եւ մտցնելով հոն հելլէն մշակոյթն ու ճարտարարուեստը: Ան նոյն իսկ արար ցեղերը օգտագործեց յօգուտ ընդհանուր բարգաւաճութեան, զանոնք ստիպեց եփրատ գետը անցնիլ, դառնալ նստակեաց, եւ զբաղիլ վաճառականութեամբ:

Այս մեծ վեհապետը՝ գտնելով, որ Հայաստանի կեդրոնը շատ հեռու է նուաճուած երկիրներէն, ձեռնարկեց կանգնելու իրեն համար նոր մայրաքաղաք մը, որուն համար ան տեղ ընտրեց Տաւրոսի հարաւային ստորոտները, Տիգրիս գետի մէկ ճիւղաւորութեանը վրայ: Այս մեծ քաղաքը, զոր իր անունով Տիգրանակերտ կոչեց, նման էր Բաբելոնին ու Նինուէին. չրջապատուած էր աղիւսէ պարիսպներով, որոնց բարձրութիւնն էր յիսուն կանգուն, իսկ լայնութիւնը այնքան էր, որ անոնց վրայ շինուած էին ախոռատուններ: Ներսը շինուեցաւ անմատչելի միջնաբերդ: Արքայական փառահեղ պալատը շինուած էր պարիսպներէն դուրս, շրջապատուած այգիներով, որոնց մէջ շինուած էին ջրամբարներ ձուկերու համար, եւ մասնաւոր անտառակներ՝ լեցուած որսի կենդանիներով: (Th. Reinach: "Mithridate Eupator, roi de Pont", Paris, 1890, էջ 345-346):

Իսկ այս հրաշալի քաղաքը բնակեցնելու համար Տիգրան արշաւանք գործեց դէպի արեւմուտք, Կապադովկիայի, Կիլիկիոյ եւ Սիրիոյ մէջ քանդեց 12 քաղաք, եւ անոնց բնակչութիւնը, մօտ 300 հազար հոգի, գլխաւորապէս յոյներ կամ հելլէնական այլազգիներ, բռնադատեց գաղթել ու բնակիլ իր նոր մայրաքաղաքը: Հայաստանէն ալ նախարարական ցեղերը հրաման ստացան տեղափոխուիլ հոն, ու բազմաթիւ շինութիւններով գեղեցիկացուցին Տիգրանակերտը (Պլուտարքոս, Զուգակը՝ չիոք, Վենետիկ, 1833, էջ 566):

Կը թուէր թէ վերածնուած էր Նինուէի թագաւորներուն շրջանը: Ինչպէս ատեն մը Սալմանասարն ու Նարուգոգոնոսորը Բաբելոն կը տանէին Հրեաները, այնպէս ալ Տիգրանա-